# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 10-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի պահանջով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Քվեարկությամբ կողմ 4, դեմ 0, ձեռնպահ 0 արդյունքներով հաստատել օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

3. <<ՌԵԱԼ ԹԱՅՄ>> ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՎԱՀԵ ԼԱԼԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 11-Ն

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 5-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արարատի մարզի Դաշտավան համայնքի 2019 թվականի բյուջեի 11-01-02 Համայնքների պահուստային ֆոնդ 4891-հոդվածից պակասեցնել 200.0 /երկու հարյուր հազար/ հազար դրամ

Ավելացնել՝

07-03-01 Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ - 4729 հոդվածին - 200.0 /երկու հարյուր հազար/ հազար դրամ:

2. 01-06-01 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ - 5112 հոդվածից պակասեցնել 5000.0 /հինգ միլիոն/ հազար դրամ.

Ավելացնել՝

04-05-01 Ասֆալտ բետոնյա ծածկի վերանորոգում - 5113 հոդվածին 2800.0 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ հազար դրամ՝ Գ.Տոնոյան և Մատուռի փողոցների լայնացման, հարթեցման և նորոգման նպատակով

5134 հոդվածին 200.0 /երկու հարյուր հազար/ հազար դրամ՝ Գ.Տոնոյան և Մատուռի փողոցների լայնացման, հարթեցման և նորոգման նախագիծ և նախահաշիվ կազմելու նպատակով

Ավելացնել՝

09-08-01 Կրթություն այլ դասերին չպատկանող - 5113 հոդվածին 950.0 /իննը հարյուր հիսուն հազար/ հազար դրամ՝ դպրոցի դասասենյակի հատակի նորոգման նպատակով 5134 հոդվածին 40.0 /քառասուն հազար/ հազար դրամ՝ դպրոցի դասասենյակի հատակի նորոգման, նախագիծ նախահաշիվ կազմելու նպատակով

Ավելացնել՝

01-06-01 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ - 5129 հոդվածին 990.0 /իննը հարյուր իննսուն հազար/ հազար դրամ՝ համայնքի երեխաների համար կարուսելներ ձեռք բերելու նպատակով

Ավելացնել՝

06-04-01 Արտաքին լուսավորման ցանցի հիմնանորոգում - 5134 հոդվածին 20.0 /քսան հազար/ հազար դրամ՝ Ս.Վարդազարյան փողոցի էլ լուսավորության վերանորոգման համար նախագիծ-նախահաշիվ կազմելու նպատակով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80 dashtavan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 12-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը՝ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 18-րդ կետի պահանջնով, առաջարկեց թույլատրել աճուրդային եղանակով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողերը և ներկայացրեց իր որոշման նախագծերը՝ օտարվող հողամասերի, օտարվող հողերի լոտերի քանակի, հողերի չափերի և մեկնարկային գներ սահմանելու մասին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 18 հոդվածի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով, Դաշտավան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ հողատեսքերը օտարել աճուրդային եղանակով՝ 2 լոտով

2. Հաստատել հողամասի լոտը և մեկնարկային գինը՝ ըստ աղյուսակի

3. Սույն որոշումն իրականացնել առաջիկա երեք ամսվա ընթացքում

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիր | Մակերեսը հա | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Այլ հողատեսք | Գ.Դաշտավան | 03-033-0624-0002 | 0.1 | գյուղատնտեսական | այլ | Այլ հողատեսք | 50000 | չկան |
| 2 | Այլ հողատես | Գ.Դաշտավան | 03-033-0530-0004 | 0.36623 | գյուղատնտեսական | այլ | Այլ հողատեսք | 100000 | չկան |

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԳԵՍ ԽԱՆԱՂՅԱՆ